

«ՏԵԱՌՆ ԱՍԵՆՈՎ» ՀՈՒՆԱՐԵՆԻ ԲԱՑԱՐՁԱԿ ՍԵՌԱԿԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՅՈՒ ՀԱՅԵՐԵՆ ԲՆԱԳՐՈՒՄ

ԳԱՐԲԵԼԱ ՈՒՆՈՒՄՆԱՆ (Իտալիա)

0.0. 1937 թ. Վ. Բընըցյանուի աշխատության մեջ՝ հարուստ փաստարկներով ապացուցվում է, որ թեև հայերենը դերբայների ավելի աղքատ համակարգ ունի, քան հունարենը, այնուամենայնիվ, իր ոսկեդարի ծաղկման շրջանում՝ Աստվածաշնչի թարգմանության ժամանակ, կարողացել է գերադանց կերպով հաղթահարել հունարենի բայաձևերի բարդության ներկայացրած դժվարությունները:

Իրոք, դերբայական դարձվածները, որոնցով հարուստ է հունարենը, առաջին թարգմանությունների մեջ արտացոլվում են տարբեր միջոցներով՝ ամեն անգամ ելնելով բնագրի պահանջներից, և նույնիսկ այն դեպքերում, երբ թարգմանությունը ձևով լիովին չի համապատասխանում բնագրին, ի վերջո պահպանվում և մեկնաբանության անհրաժեշտությունից դրված երբեմն նույնիսկ խորացվում է բնագրի տեքստի իմաստը:

0.1. Հունարենին առավել բնորոշ դերբայական դարձվածներից մեկն է բացարձակ սեռականը: Իր երկար պատմության ընթացքում հունարենը միշտ դորձածել է այս բացարձակ կառույցը, որը միմյանց հետ սեռական հոլովով համաձայնող դերբայի և նրա ենթակայի միջոցով արտահայտում է պարագայական արժեքով երկրորդական նախադասության իմաստ²:

Բարսեղ Կեսարացու «Գիրք հարցողաց»-ի հայերեն թարգմանության ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է ընձեռում դիտարկելու որոշ ձևեր, որոնցով թարգմանվում է հունարենի բացարձակ սեռականը, և որոնք շեղվում են «դասական» համարված, այսինքն՝ Աստվածաշնչի թարգմանության մեջ հանդիպող ձևերից:

0.2. Այստեղ մեր նպատակն է համեմատել այդ երկու կարգի ձևերը՝ շարունակելով մեր որոնումները նաև Բարսեղ Կեսարացու աշխատություններից «Գիրք պահոց»-ի և «Վեցօրեայ»-ի մեջ, մասնավորապես լուսաբանելու համար մեզ առավել հետաքրքրող, այսպես կոչված, «տեալն ասելով» տիպը, որը լայն կիրառություն է ձեռք բերել, բայց նրա տարածման պատմությունը բավարար չափով ճշգրտված չէ:

Ներկայացվում է օրինակների մի ընտրանք՝ Ավետարանի թարգմանության և Բարսեղի թարգմանության մեջ մեր դիտարկած 100 դեպքերից, և փորձ է արվում պարզել մեզ հետաքրքրող ձևի առաջացման գործոնները:

1.0. Բացարձակ սեռականը Ավետարանի թարգմանության մեջ³

¹ V. Banateanu. La traduction armenienne des tours participiaux grecs. Bucarest, 1937 (այսուհետև՝ Banateanu. Tours participiaux).

² Տե՛ս R. Kühner, B. Gerth. Ausführliche Grammatik der griechischen Sprache, Leverkusen, 1955⁴ II, S. 78; E. Schwyzer. Griechische Grammatik. II Bd, München, 1959, S. 398—399; J. Humbert. Syntaxe grecque. Paris, 1960³, p. 130—131, 282. Բացարձակ դերբայի մասին ընդհանրապես և հայերենի հետ կապված տե՛ս M. Morani. L'uso del participio assoluto nelle lingue indoeuropee, „Rendiconti Ist. Lombardo. Classe di Lettere“. 107 (1973), p. 707—758 (այսուհետև՝ Morani. Participio Assoluto).

³ Չուկասի Ավետարանից քաղված օրինակները վերցված են Banateanu. Tours participiaux աշխատությունից, Մարկոսի ավետարանից քաղվածները այս կապակցությամբ կատարած մեր հետազոտության արդյունքն են:

1.1. Հոնարենի բացարձակ սեռականով կառույցը, երբ այն ժամանակի պարագա երկրորդական նախադասության արժեք ունի, թարգմանվում է իբրև շաղկապով և դիմավոր բայով: Ծնթական դրվում է ուղղական հոլով:

Օր.՝ $\epsilon \nu \omicron \upsilon \epsilon \nu \eta \varsigma \delta \epsilon \eta \upsilon \epsilon \rho \alpha \varsigma$

և իբրև տիւ եղև (Ղուկ. Դ. 24):

$\kappa \alpha \iota \omicron \psi \iota \tau \varsigma \gamma \epsilon \nu \omicron \mu \epsilon \nu \eta \varsigma$

և իբրև երեկոյ եղև (Մարկ. ԺԴ, 17):

$\alpha \pi \epsilon \lambda \theta \omicron \nu \tau \omega \nu \omicron \varsigma \tau \omega \nu \alpha \gamma \gamma \epsilon \lambda \omega \nu$ 'Iωάννου

և իբրև զնացին հրեշտակին Յովհաննու (Ղուկ. է, 24):

$\kappa \alpha \iota \delta \iota \alpha \pi \epsilon \rho \alpha \sigma \omicron \nu \tau \omicron \varsigma \tau \omicron \upsilon$ 'Ιησοῦ

և իբրև անց Յիսուս (Մարկ. Ե, 21):

$\kappa \alpha \iota \epsilon \mu \beta \alpha \iota \nu \omicron \nu \tau \omicron \varsigma \sigma \upsilon \tau \omicron \upsilon \varsigma \epsilon \iota \varsigma \tau \omicron \pi \iota \omicron \iota$

և իբրև եմուս նա ի նաւն (Մարկ. 5, 18):

Ժամանակային նախադասության արժեքով այս տիպի մեշ կարելի է գտնել նաև դեպքեր, որտեղ ծնթական հայերեն չի թարգմանվում:

$\tau \alpha \upsilon \tau \alpha \omicron \varsigma \alpha \upsilon \tau \omicron \upsilon \lambda \epsilon \gamma \omicron \nu \tau \omicron \varsigma$, $\epsilon \gamma \epsilon \nu \epsilon \tau \omicron \nu \phi \epsilon \lambda \eta$

և իբրև զայս ասաց, եկն ամպ (Ղուկ. Թ, 34):

$\kappa \alpha \iota \tau \alpha \upsilon \tau \alpha \lambda \epsilon \gamma \omicron \nu \tau \omicron \varsigma \alpha \upsilon \tau \omicron \upsilon$, $\kappa \alpha \tau \eta \varsigma \chi \upsilon \nu \omicron \nu \tau \omicron \pi \alpha \nu \tau \epsilon \varsigma$

և զայս իբրև ասաց, յամօթ լինէին ամենեքեան (Ղուկ. ԺԴ, 17):

1.2. Ժամանակային արժեք ունենալու դեպքում հոնարենի դերբայը (աորիստի կամ ներկայի) թարգմանվում է նաև անորոշ դերբայով՝ ընդ կամ ի նախդիրների հետ: Այս դեպքում ծնթական դրվում է սեռական հոլովով: Զրինակներ.

$\kappa \alpha \iota \epsilon \gamma \epsilon \lambda \theta \omicron \nu \tau \omicron \varsigma \alpha \upsilon \tau \omicron \upsilon \epsilon \kappa \tau \omicron \upsilon \pi \lambda \omicron \iota \omicron \upsilon \dots \omicron \pi \eta \nu \tau \eta \varsigma \epsilon \nu \alpha \upsilon \tau \omicron \dots$

և ընդ ելանելն նորա ի նաւէ անտի, պատահեաց նմա (Մարկ. Ե, 2):

$\kappa \alpha \iota \epsilon \kappa \pi \omicron \rho \epsilon \upsilon \omicron \mu \epsilon \nu \omicron \upsilon \alpha \upsilon \tau \omicron \upsilon \epsilon \kappa \tau \omicron \upsilon \iota \epsilon \rho \omicron \upsilon$, $\lambda \epsilon \gamma \epsilon \iota \dots \epsilon \iota \varsigma$

և յելանելն նորա ի տաճարէ անտի, ասէ... մի (Մարկ. ԺԴ, 1)

$\kappa \alpha \iota \epsilon \iota \varsigma \epsilon \lambda \theta \omicron \upsilon \tau \eta \varsigma \tau \eta \varsigma \theta \upsilon \gamma \alpha \tau \rho \omicron \varsigma \dots \eta \rho \epsilon \varsigma \epsilon \nu \tau \omega$ 'Ηρώη

և ի մտանել դստերն... հաճոյ եղև Հերովդի (Մարկ. Զ, 22)

1.3. Ժամանակային արժեքի դեպքում տեական կերպն արտահայտելու համար բացարձակ սեռականի ներկա դերբայը հայերեն միշտ թարգմանվում է անցյալ անկատար ժամանակի բայով՝ մինչդեռ կամ մինչ շաղկապների հետ: Ծնթական մեծ մասամբ զեղչված է:

Օր.՝ $\kappa \alpha \iota \epsilon \sigma \theta \iota \omicron \nu \tau \omega \nu \alpha \upsilon \tau \omicron \upsilon \dots \lambda \alpha \beta \omicron \nu \alpha \rho \tau \omicron \nu \dots \epsilon \kappa \lambda \alpha \varsigma \epsilon \nu$

և մինչդեռ ուտէին, առեալ Յիսուսի հաց... երեկ (Մարկ. Ժ, 22)

$\kappa \alpha \iota \omicron \nu \tau \omicron \varsigma \alpha \upsilon \tau \omicron \upsilon \epsilon \nu \beta \eta \theta \alpha \nu \iota \alpha$

և մինչ էր ի Բեթանիա... (Մարկ. ԺԴ, 3)

1.4. Պատճառի իմաստի դեպքում հոնարենի դերբայը հայերենում ներկայացվում է դիմավոր բայով և զի շաղկապով: Ծնթական դրվում է ուղղական հոլովով:

Օր.՝ $\omicron \psi \epsilon \eta \delta \eta \omicron \upsilon \sigma \eta \varsigma \tau \eta \varsigma \omega \rho \alpha \varsigma$, $\epsilon \xi \eta \lambda \theta \epsilon \nu$

և զի էր երեկոյացեալ ժամն, ել... (Մարկ. ԺԱ, 11)

1.5. Մարկոսի Ավետարանում հանդիպում են նաև դեպքեր, որտեղ բացարձակ սեռականը, որ միշտ փոխարինում է երկրորդական նախադասու-

թյանը, համապատասխանաբար փոխարկվում է գլխավոր համադաս նախադասություն:

Որ. ԳՐԱՆ ԲԵՆԵՆՈՒՆ ԵՂԵՆՈՒ ՆՎԵՐՈՒՆ ԶԱԼԻ ԵՂՆՎԵՐ ԵՒ ՓԵՐԵՆ... ԼԵՂԵԼ
Դարձեալ ժողովուրդ բազում էր և ինչ ոչ ունէին ուտել... ասէ
(Մարկ. Ը, 1).

1.6. Կա ուշագրավ մի դեպք, որտեղ հայ թարգմանիչը հունարենի բացարձակ սեռականը ներկայացնում է բայաձևը փոխարինելով նրան իմաստով լիովին համապատասխանող գոյականի գործիական հոլովով.

ԵՂԻՐՍԵՂԱՆ ՔԱՆԴԱՅՈՒՆ ԵՐԵՆՈՒՆ ԿՐԿԻՐ ՎԵՐԱՆԸ ԳՈՐԾԱԿԵՐՈՒՄԵՎԸ (Մարկ. ԺԶ, 20):

1.7. Այս բոլոր օրինակներից կարելի է եզրակացնել, որ Ավետարանի հայ թարգմանիչը կանգ չի առնում դերբայական դարձվածի առաջ, որն օտար կարող էր թվալ իր լեզվին և թարգմանում է այն մեծ ազատությունով: Նա ամեն անգամ կիրառում է տարբեր ձևեր, բայց միշտ հարմարեցնում է դրանք բնագիր տեքստի իմաստին:

Ամփոփելով դրանք, կարելի է տեսնել, որ. ա) ժամանակային արժեքով բացարձակ սեռականը առավել հաճախ թարգմանվում է իբրև, մինչդեռ, մինչ շաղկապներով ու դիմավոր բայով կամ ընդ, ի նախդիրներով ու անորոշ դերբայով. բ) պատճառի պարագայի արժեք ունեցող բացարձակ սեռականը ներկայացվում է կամ իբրև, կամ ավելի համապատասխան զի (հանգի) շաղկապով և դիմավոր բայով. գ) կան նաև նվազ հաճախական այլ միջոցներ, բայց մեղ հետաքրքրող դարձվածն արտահայտելու համար առավել նշանակալից է դերբայի փոխարեն գործիական հոլովով գոյականի կիրառությունը. դ) դիմավոր բայի հետ ենթական ընդհանրապես դրվում է ուղղական, իսկ նախդիրով անորոշ դերբայի հետ՝ սեռական հոլովով:

Թվում է, որ և այսպիսի այսպիսի կարգեցելոց... դառնայ (Խոր. Բ, 28) տիպի դարձվածները, որտեղ երկրորդական նախադասության այսպիսի ենթական և նրա հետ սեռական հոլովով համաձայնող բայը՝ կարգեցելոց դերբայի օտար են դասական հայերենին և ըստ այդմ արդյունք են հունարենի ադդեցություն⁴: Բայց այս կողմին առիթ կունենանք անդրադառնալու մեր հետագա շարադրանքի ընթացքում:

2.0. Մեկնակետ, այսինքն՝ Աստվածաշնչի թարգմանության մեջ եղած վիճակի պարզելուց հետո անցնենք հունարենի բացարձակ սեռական դարձվածի ներկայացմանը սր. Բարսեղի երկերի թարգմանություններում: Բարսեղի երկերի հայերեն թարգմանությունների ամբողջության մեջ անհրաժեշտ է մյուսներին առանձնացնել «Վեցօրեան»։ այդ երկի պարունակած ինը ճառերից երկուսի (առաջինի և երրորդի) ուսումնասիրությունը մեր նպատակի համար օգտակար արդյունքներ չտվեց: Այս երկու ճառերում բնավ չկա հունարենի բացարձակ սեռականի տառացի թարգմանություն: Դրա բացակայությունը նշանակալից է նաև ժամանակագրական առումով: Քանի որ հայտնի է, որ եղել են մեկից ավելի թարգմանություններ, այդ կապակցությամբ սլետք է խոսել մի աղատ վերաշարադրանքի մասին, որ վերաբերում է Մ դարի առաջին կեսին⁵, այսինքն՝ առաջին թարգմանիչների ժամանակաշրջա-

⁴ Տե՛ս H. Jensen. Allarmenische Grammatik. Heidelberg. 1959. S. 135, ահա նաև Վ. Չալբխեան, Ա. Այտրեան. Քերականութիւն հայկազեան լեզուի. Վիեննա, 1885 (այսուհետեւ՝ Չալբխեան. Քերականութիւն), էջ 394:

⁵ Տե՛ս Կ. Մուրադյան. Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրութեան մեջ. Երևան, 1976 (այսուհետեւ՝ Մուրադյան. Բարսեղ), էջ 203:

նին, և դա մեղ ստիպում է եզրակացնել, որ «Վեցօրեայ»-ում գիտակցաբար և կամովին խուսափել են այդ օտար շարահյուսական դարձվածից:

Ինչ վերաբերում է «Գիրք հարցողաց»-ի և «Գիրք պահոց»-ի թարգմանություններին, ընդհակառակն, թարգմանիչների⁶ որդեգրած մեթոդը բառացի վերարտադրությունն է: Հայերեն բնագիրը ճշգրիտ հետևում է հունարեն բնագրին, բայց դեռևս ոչ լիովին այն ձևով, որ հատուկ էր հունարան դպրոցին: Իրոք, բառապաշարը հիմնականում քաղվում է բուն հայկական ունեցվածքից, և բարդ բառերը կերտվում են այն միջոցներով, որոնք հանդիպում են դասական հայերենում⁷: Բայց շարահյուսական տեսակետից նկատվում է, որ հատկապես բարդ պարբերությունների հարցում թարգմանիչներն այլևս չունեն իրենց հին գործընկերների ճկունությունը և մեծ չափով կախված են բնագիր տեքստից, առանց սակայն մոռանալու իրենց լեզվի առանձնահատկությունները: Այստեղից բխում է, որ այդ դարձվածները չեն կարող հատուկ համարվել դասական գրաբարի ժամանակաշրջանին, բայց մյուս կողմից՝ ամբողջապես հունարենի պարզ պատճենումներ չեն:

Բացարձակ սեռական կառույցի համար մեր հայերեն բնագիրը ընձեռում է մի շարք օրինակներ, որոնք անհրաժեշտ է ներկայացնել իրենց ողջ բազմազանությամբ:

3.0. Բացարձակ սեռականի թարգմանությունը սբ. Բարսեղի ճայերեն բնագրի մեջ

3.1. Կան այս դարձվածի թարգմանություններ, որոնք համապատասխանում են Ավետարանի մեջ մեզ հանդիպած ձևերին: Ինչպես Աստվածաշնչի թարգմանության մեջ, այնպես էլ մեր բնագրում հայերենը երբեմն կիրառում է պարզ նախադասություն՝ ստորադասության փոխարեն.

τοῦτο μὲν Μωυσεως... προσεδρευσεντος τῷ θεῷ καὶ τυχόν-
τος τῆς διακονίας... τοῦτο δὲ Ἡλία... τῆς ὀπασίας... κα-α-ξείω-
θέντος (GR 16) (PG 31 հմմտ. Gribomont, Ascétiques. էջ 212)⁸

այսոքիւք և Մովսէս... անմեկնելի լինելով յԱստուծոյ ճանդիպեցաւ
սպասաւորութեան... և Նղիայ... տեսութեանն արժանաւորեցաւ
(Q, 14)

τῆς γραφῆς ἐθός ἐχούσης (PR 255) (PG 31, 1253 A)

գիրք սովորութիւն ունին (Q, 228)

τοῦ δὲ ἡμιοῦργου θεοῦ ὀρίσαντος Χρηζείν (GR 7) (PG 31, 928 D)

սրարչին աստուծոյ սանմանեալ է պէտս ունել (Q, 7)

3.2. Պատճառի իմաստով բացարձակ սեռականը, ինչպես Մարկ. ԺԱ 11 շրինակի մեջ, թարգմանվում է զի շաղկապով և դիմավոր բայով: Ննթական դրվում է ուղղական հոլովով:

⁶ Հայկական ավանդույթը մեզ հաղորդում է Բարսեղի երկերի հնարավոր թարգմանիչների լրագմթիվ անուններ, որոնք վերաբերում են V—VII դդ.: Անկասկած, ճառերից մի քանիսը այդ վերջին ժամանակաշրջանից են: Հմմտ. Մուրադյան. Բարսեղ, էջ 171—181:

⁷ Տե՛ս G. Uluhogian. Tecnica della iraduzione, particolarita lessicali, calchi sintattici della versione armena dell' „Asceticon“ di S. Basilio. — «Հանդես ամսօրյա» 89 (1975), № 10—12, էջ 405—422:

⁸ «Գիրք հարցողաց»-ի հղումների մեջ կիրառված նշումները համապատասխանում են J. Gribomont. Histoire du texte des Ascétique de S. Basile, Louvain, 1953, աղյուսության մեջ առաջադրված տեղեկատվությանը, այն է՝ GR—Մեծ կանոն, PR—Փոքր կանոն, Q—Գիրք հարցողաց. այս վերնագրերը տրված է կանոնների ամբողջական շարքին հայերեն թարգմանությամբ մեջ, որտեղ չկա նման բաժանում Մեծ և Փոքր կանոնների միջև, ինչպես հունարենում է: Բանի որ հայերեն թարգմանությունն անտիպ է, քաղվածքները բերվում են բոլոր Մատենադարանի ձեռ. № 5595 բնագրի:

τοῦ θεῷ πνεύματος ἐκ γυναικός (PR 118) (PG 31, 1161 C)

զի առաքելալ ասէ (Q, 95)

3.3. Ժամանակային արժեքով բացարձակ սեռականը հաճախ թարգմանվում է ժամանակի պարագա լրացումով (այսինքն՝ քերականական կարգերի փոփոխությամբ, բայց առանց իմաստի որևէ խաթարման) կամ յորժամ շաղկապով և դիմավոր բայով:

Ορ. τῆς γυναικός ἀρχομένης (GR 37) (PG 31, 1016 B)

ի սկիզբն գեղեցուն (Q, 33)

ἐνσταίντως τοῦ θεοῦ (Prol. 4) (PG 31, 892)

ի ժամանակի սերմանց

ὁ ἀποστάτης τοῦ πνεύματος (GR 41) (PG 31, 1024 B)

յորժամ ոսն բեկանիցի (Q, 34)

3.4. Այս ձևերից հետո, որոնք կրկնում են «դասական» լուծումները, ինչպես Ավետարանի օրինակներում է, և նախքան մեր հոգվածի բուն նյութին անցնելը, քննարկենք այն օրինակները, որոնք խստորեն հետևում են իրենց հունարեն կաղապարներին, առաջացնելով 1.8. կետում ներկայացված տիպի շարահյուսական իսկական պատճենումներ: Պետք է նշել, որ սրանք ըստ երևույթին ավելի հաճախական են «Գիրք պահոց»-ի, քան «Գիրք հարյուրաց»-ի թարգմանության մեջ: Արդյոք կարո՞ղ է սա առաջինի թարգմանության ավելի ուշ և հունարեն դպրոցին ավելի մոտ լինելու լեզվական հատկանիշ ծառայել: Առանց այդ երկու ստեղծագործությունների սպառիչ քննության հնարավոր չէ այդ պնդել:

Ορ. καίροσιν ποτε συνεμπεσόντως (GR 18) (PG 31, 965 B)

ժամանակի երբեմն ի վերայ եկելոյ (Q, 14)

πολλάκις δὲ καὶ τοῦ καίροσιν... παρθείντως (PR 261) (PG 31, 1257 C)

բաղում անդամ և ժամանակին անցելոյ (Q, 237)

ὁ ἀπανητήτων γὰρ πλοῦτος [ἐστὶ] γὰρ θεοῦ... καὶ γυναικὸς καὶ ἀνδρὸς καὶ πνεύματος τῷ ὄντι (Indiv.) (PG 31, 281 B)

քանզի ծախող է ընդհուրթեան բժշկութիւն... ամենեցուն միանգամայն բաժանեցելոցն զգոյսն... (Առ ընդհան) (MK I, 202)⁹

καὶ ἡλίου ἀμπελῶντος ὁμοῖς τὰς ὁμοῖς ἐπικαλύπτει

և արեգական պայծառացելոյ ոչ ոք զդէմսն ծածկէ (Ձմախանաց) (MK III, 202)

πῶς... ὁργιστὸν χαιροῦμαι... μυστῶν περιεσταμένων ἡμᾶς ἀβουλήτων (De grat. act.) (PG 31, 217 D)

դիարդ և կարողութիւն է ուղղել... բիւռնց շուրջ կացելոց զմեզ ակամայ շարեաց (Յաղագս գոհութեան) (MK III, 204)

σχοτασσεῖς... ἐγγίζονται, περιδόνουμένης τῆς κεραιῆς (De grat. act.) (PG 31, 229 A)

և ապշութիւն... լինին, բմբեցելոյ գլխոյն... (Յաղ. գոհ.) (MK III, 211)

⁹ «Գիրք պահոց»-ի հայերեն թարգմանությունն անտիպ է, բացի վեց հատվածներից, որոնք հրատարակել է Կ. Մուրադյանը «Кавказ и Византия» (Ереван, 1979) ժողովածուի մեջ: Հետևաբար, համառոտագրությունը, որ՝ MK. 1, 200 նշանակում է՝ Мурадян. Кавказ и Византия, № 1, էջ 200:

4.0. Իրար հակադրվող այս ձևերի մեջ, որոնցից առաջիններն աղատ են (հմմտ. 3.1., 3.2., 3.3.), իսկ երկրորդները կառչում են հունարենի կաղապարին (հմմտ. 3.5.), այժմ քննության առնենք հունարենի բացարձակ սեռականի դիմաց մեր թարգմանության մեջ ամենից ավելի գործածված երկու տիպի շարույթներ: Դրանք են մի կողմից՝ -եալ վերջավորությամբ դերբայը սեռական (շատ սակավ՝ ուղղական) ենթակայով, մյուս կողմից՝ անորոշ դերբայի գործիականը սեռական ենթակայով: Դիտարկենք օրինակներ այս երկու կառույցներից յուրաքանչյուրով.

4.1.1. -եալ վերջավորությամբ դերբայ և սեռական ենթակա.

Ορ. τοῦ κυρίου ὀριστικῶς εἰπὼντος (GR 5) (PG 31, 921 B)

տեառն սահմանաւ ասացեալ (Q, 5)

καὶ τοῦ ἀποστόλου προσαρτοῦντος (GR 37) (PG 31, 1009)

առաքելոյ հրամայեալ (Q, 33)

τοῦ ἀποστόλου ποτὲ μὲν παραγγέλλοντος... ποτὲ δ' ἀποφηνάμενου (PR 149) (GR 31, 1180 D)

առաքելոյ երբեմն պատուիրեալ... երբեմն յայանեալ (Q, 131)

συμπληρωθεὶς τῆς δὲ τῆς ἡμέρας (GR 37) (PG 31, 1016 A)

լցեալ ատուրն

4.1.2. -եալ վերջավորությամբ դերբայ և ուղղական ենթակա.

οὐ δύναμενο... ἐκαστοῦ γινώσκειν (GR 7) (PG 31, 929 D)

ոչ կարացեալ... իւրաքանչիւր ճանաչել (Q, 7)

4. Անորոշ դերբայի գործիական հոլովը սեռական ենթակայի հետ.

οἶοναι... περικεντούμενοι, σφαδάζοντος αὐτοῖς τοῦ θυμοῦ καὶ πηδωντος (Adv. Ir.) (PG 31, 356 B)

որպէս... խայթեալք, ընդոսանցուցանելով զնոսա ցասման և ի վեր վագեցուցանելով (MK III, 184) (Զբարկացողաց)

τὸ λάνθανον ἐξευρεθείη θεοῦ... χαρίζομενο (Prol. 4) (PG 31, 909 B)

զանխլացեալն գացի, աստուծոյ... շնորհելով

τοῦ θεοῦ μὴ θέλοντος τὸν θάνατον τοῦ ἀμαρταλοῦ (PR 261) (PG 31, 1260 A)

աստուծոյ ոչ կամելով զմահ մեղաւորին

Այս վերջին արտահայտությունը հատկապես ուշագրավ է: Այն դառնում է յուրատեսակ կայուն բանաձև «Գիրք հարցողաց»-ի մեջ ամենուր, որտեղ հունարեն բնագիրը շատ դեպքերում ներկայացնում է բացարձակ սեռականը իր ամենահիմնական ձևով՝ անուն և դերբայ: Այս դեպքում անուն-ենթական համարյա միշտ ներկայացված է մեզ, կամ անուն, կամ 'αποστολος բառերով: Բերենք մի քանի օրինակ.

τοῦ κυρίου ἡμῶν Ἰησοῦ Χριστοῦ λέγοντος (GR 37) (PG 31, 1009 C)

տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ասելով (Q 33)

τοῦ κυρίου διδάξαντος ἡμᾶς (GR 18) (Pg 31, 965 D)

տեառն ուսուցանելով զմեզ (Q 14)

τοῦ κυρίου (ἀποστόλου) εἰπόντος (Pg 31, 881 — 1305 բազմիցս)

տեսան (առաջինը) ասելով¹⁰ (Q 90, 176, 213, 216, 234, 241 ևն):
 5.0. Ակնհերե է, որ Պիրրե հարցողացա-ի թարգմանիչը մեր քննարկված
 ձևերից նախընտրում է վերջին երկուսը՝ -եալ վերջավորությունը գերբայը և
 անորոշ գերբայի գործիական հոլովը՝ միշտ սեռականաձև ենթակայով: Դը-
 րանք նաև միասին գործածված հանդիպում են այն օրինակներում, որտեղ
 հունարենի բացարձակ սեռական դարձվածների շարքի դիմաց հայերենը փո-
 փոխակի կիրառում է երկու ձևն էլ՝ հետաքրքրական զանազանակերպու-
 թյուն մտցնելով¹¹:

Ορ. τὸν ἀποστόλον λέγοντος, οὐχ ὅτι ἀπ' ἐπιστῶν καὶ ἐπιστῶν λέ-
 ῶν ἐξέστῶν. καὶ πάλιν τὸν καὶ οὐδὲν ὁμοιογενῶς ὅτι... καὶ ἀλλὰ τοῦ λέ-
 γοντος (PR 60) (PG 31, 1121 D)

առաջինը ասելով եթէ ոչ ի մէջն բաւական եմք խորհել ինչ իբրև
 յանձանց և նոյն ինքն տեսան խոստովանեալ թէ... և այլուր ասե-
 լով... (Q, 216)

¹⁰ Պետք է նշել, որ անորոշ գերբայի գործիականը մի տեսակ համաբանությամբ տարած-
 վում է նաև բացարձակ սեռականից դուրս, բացահայտի գերով հանդես եկող գերբայի վրա
 այն դեպքերում, երբ սպասվում է երկրորդական նախադասություն.

κατὰ τὴν φωνὴν αὐτοῦ τοῦ κυρίου... εἰπόντος ὅτι... (Prol. 4) (PG 31
 896 A)

բոտ նորուն տեսան ծայնի, ասելով թէ...

ὅτι αὐτὸ πρὸ φητος λέγοντος (PR 171) (PG 31, 1196 A)

մարգարէին ասելով (Q 34):

ἐκ τῶν τοῦ κυρίου ῥημάτων, εἰπόντος (PR 150) (PG 31, 1181 B)

ի տեսան բանիցն, ասելով (Q 132)

τὴν εὐλογία πρὸ τοῦ κυρίου λέγεται (GR 42) (PG 31, 1025 A)

գորհնութիւնս ի տեսանէ առջէ, ասելով (Q 34)

Այդպես չէ այն դարձվածներում, որտեղ գերբայը հունարենում ուղեկցվում է հոգով. այս
 դեպքերում թարգմանիչը լավ հասկանում է դարձվածի բացահայտչային արժեքը և թարգմա-
 նում է այն երկրորդական նախադասությամբ, ինչպես անում է Ավետարանի թարգմանիչը:

ἀλλ' ἵνα τὴν ἐντολὴν τοῦ κυρίου πληρώσῃ, τοῦ εἰπόντος... (GR 42) (PG 31,
 1025 A)

դի պատուիրանն տեսան լցցէ, որ ասացն (Q 34)

հմմտ.

προτιγασε ἀπὸ τῶν γραμμάτων τῶν ἐλεόντων περιπατεῖν

դգոյշ լերուք ի զգրացն, որ կամին... շրջել (Ղուկ. Ի, 46)

Անորոշ գերբայի գործիականի հետ սեռական հոլովով ենթակա բանաձևից օգտվում են նաև
 թարգմանելու համար որպես լրացում (հունարենում սեռ. հոլով) հանդես եկող գերբայը, որ
 կախված է առջևս բայից.

ἀλλ' αὐτοῦ καὶ αὐτὸς τοῦ ἀποστόλου λέγοντος (Prol. 4) (PG 31, 896 A)

այլ յութիլ, այսպիսին առաջինը ասելով

¹¹ Երկու բանաձևի՝ -եալ-ով գերբայի և գործիականով անորոշի այս համատեղ օգտագոր-
 ծումը դարձյալ համաբանությամբ տարածվել է հունարենի երկու կամ ավելի որոշչային իմաս-
 տով գերբայների թարգմանության վրա, որ հավաստում է հետևյալ օրինակը.

το γάρ... μεριμνᾶν πανταπᾶσαι εἰσιν ὑπὸ τοῦ κυρίου καὶ ἐλεονόμου, εἰπόν-
 τος μὴ μεριμνᾶτε... καὶ ἐπεινεχτότος... (GR 42) (PG 31, 1025 A)

Հոգալ ամենայնի ի տեսանէն աղգիւնալ է ասելով մի հոգայք... և ի վերայ ածեալ
 երբ... (Q 34):

του κυρίου ποτε μεν ισχυοντος. μη χρινατε. και ου μη χριθητε. ποτε δε
 τιν διαβαιν χρισιν χρισεις προστασσοντος (PR 164) (PG 31. 1189:B1)
 տեսա՞նք երբեմն ասելով մի դատիք և ոչ դատիցիք, երբեմն՝ զարդար-
 դատաստան դատել նրամայեալ (Q, 150)

6.0. Մենք անհրաժեշտ չենք համարում կանգ առնել հունարենի բացար-
 ձակ սեռականի դիմաց այստեղ լայն կիրառությունն գտած «եալ վերջավորու-
 թյամբ դերբայով դարձվածի վրա, նկատի ունենալով, որ այն բխում է դա-
 սական հայերենում լավ հայտնի մի շարահյուսական կառուցից¹²։ Հնդհակա-
 ոակն, մեր նպատակն է ուշադրություն հրավիրել անորոշ դերբայի գործիա-
 կանով և սեռական ենթակայով կազմված բարդ դարձվածի վրա, որը գրե-
 թե աննկատ է մնացել քերականական աշխատություններում։

Անորոշ դերբայի գործիականի կիրառությունը իր սովորական արժե-
 քով, երբ այն ցույց է տալիս գլխավոր նախադասության մեջ գործողության
 կատարման ձևը կամ միջոցը, հայտնի է դեռևս հայոց լեզվի առաջին գրա-
 վոր վկայություններում¹³։ Սակայն մեր դեպքում այս դարձվածին, առավել
 հին կիրառությունների համեմատությամբ, բնորոշ է մի կողմից՝ նրա նախ-
 նական նշանակության կորուստը և մյուս կողմից՝ սեռական ենթակայի հետ-
 զուգորդվելու առանձնահատկությունը։

Հայ գիտնականներից Ա. Բազրատունին իր արժեքավոր քերականության
 մեջ նշում է, որ անորոշ դերբայը անունների պես կարող է հոլովվել և գոր-
 ծիական հոլովով դրվելու դեպքում ունենալ սեռականով հատկացուցիչ, որը
 պետք է դիտվի որպես պատկանելության կամ ստացական սեռական¹⁴։ Այ-
 նուհետև, նա նկատում է, որ անորոշի գործիական հոլովը երբեմն գործած-
 վում է ժամանակի կամ պատճառի պարագայի արժեքով և բերում է օրի-
 նակներ, որտեղ ենթակաները դրված են սեռական հոլովով¹⁵։ Դժբախտա-
 բար, դրանք շատ ընդհանուր են և գրեթե չունեն հեղինակային հղումներ.
 եթե սա վկայում է այդ դարձվածի տարածվածության մասին, ապա այնու-
 մասնայինիվ հնարավոր չէ դրանից որևէ որոշակի եզրակացության հանգե-
 նրա առաջացման մասին։

Չալըխյանն իր հերթին արդյունավետ կերպով մատնանշում է գործիա-
 կան հոլովի կիրառության ընդլայնումը հետդասական ժամանակաշրջա-
 նում¹⁶, բայց բացահայտ կերպով չի դնում անորոշի գործիական հոլովի հետ
 սեռական ենթակայով կազմված դարձվածի հարցը։ Իր բերած միակ օրի-
 նակում¹⁷ ենթակայի սեռական հոլովը, ինչպես և Բազրատունին, նա բա-

¹² A. Meillet. Altarmenisches Elementarbuch. Heidelberg, 1913, p.112—115; Նույ-
 նի՝ Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique. Vienne, 1936², p.128—
 129; S. Lyonnet. La parfait en armenien classique. Paris, 1933; H. Vogt. Les formes
 nominales du verbe arménien. — Norsk Tidsskrift for sprogvidenskap, VIII (1937).
 (այսուհետև՝ Vogt. Formes nominales), p. 1—70; E. Benveniste. La construction
 passive du parfait transltif. — B. S. L., 48 (1952), p. 52—62, Նույնի՝ Sur la phonétique
 et la syntaxe de l'arménien classique. — B. S. L., 54 (1959), p. 46—68; H. Yensen.
 Altarmenische Grammatik. Heidelberg, 1959, p. 133; Moranl. Participio assoluto,
 p. 719—724:

¹³ Տե՛ս, Իմիջիայոց. Չալըխյան. Գերականութիւն, էջ 401. Ch. Mercier.
 L'ecole Hellénistique dans la littérature arménienne — REArm. n. s. XIII (1978—79).
 (այսուհետև՝ Mercier. E. H.), p. 73.

¹⁴ Տե՛ս Ա. Բազրատունի. Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացիւոց. Վենե-
 տիկ, 1852 (այսուհետև՝ Բազրատունի. Քերականութիւն), էջ 251:

¹⁵ Տե՛ս Բազրատունի. Քերականութիւն, էջ 260:

¹⁶ Տե՛ս Չալըխյան. Գերականութիւն, էջ 402—403:

¹⁷ Տե՛ս Ն. տ. էջ 401, ձեռն ի վերայ քննելով առաջիւոցն, տուեալ լինի հոգի սուրբ:

յատրում է որպես պատկանելության սեռական: Նրանցից ոչ մեկը որևէ կարևորություն չի տալիս այս դարձվածին:

Արևմտյան գիտնականներից հատկապես Հ. Ֆոգտն¹⁸ է, որը խորացել է անորոշ դերբայի ուսումնասիրության մեջ, դիտարկելով նրա երկակի բնույթը՝ բաղական և անվանական: Անվանական գործառույթով նրա կիրառությունը գործիական հոլովով հաճախ բնութագրվում է անվան սեռականով, ինչպես ցույց է տալիս հետևյալ օրինակը՝ «ծնալ ի սուրբ կուսէն Մարիամայ, յառաջագոյն նկատելով մարգարէիցն», որը Ֆոգտը բերում է Նդիշից (Բ, 63—64) և բառացի թարգմանում «մարգարենների նախապես ներկաանելու գործողության միջոցով»:

Հետևապես այն դալիս է ճիշտ և ճիշտ տեառն ասելով տիպի դարձվածից, որը բառացի նշանակում է «տիրոջ ասելու միջոցով» և որը ձևականորեն պետք է արժևորվի ինչպես տեառն բանի՝ «տիրոջ խոսքի միջոցով», որտեղ տեառն-ը միաժամանակ ստացական սեռական է և ենթակա:

Արդ, բացատրելու համար այն մեծ նախասիրությունը, որ գտել է մեր նշած դարձվածը բացարձակ սեռականի թարգմանության մեջ, շատ հետաքրքրական է վերհիշել Մարկոսի Ավետարանի օրինակը (ԺՁ, 20) (հմտ. 1.6), որտեղ τῶν ἀρχαίων προφητῶν բացարձակ սեռականը թարգմանվել է տեառն գործակցությամբ «տիրոջ գործակցության միջոցով» և որտեղ τῶν προφητῶν-ի արժեքը ճշտորեն վերարտադրված է նրան իմաստային և ստույգարանական տեսակետից համապատասխան անվան գործիականով: Մեր դարձվածը հասկանալու համար պետք է ևլնել Ավետարանի թարգմանության մեջ վկայված այս օրինակից: Պարզ է, որ անորոշ դերբայը գիտակցվել է որպես անվանական ձև և գործածվել գործիական հոլովով անվան փոխարեն, սակայն դա բավարար չէ այդ կառույցը որպես հունարենի բացարձակ սեռականի համարժեք արդարացնելու համար: Կարծում ենք, որ այն նաև երկու երևույթների համատեղման արդյունք է:

Մի կողմից անորոշ դերբայի անվանական բնույթը նպաստել է դերբայի փոխարինմանը անունով, մյուս կողմից որպես նաև բայական ձև նրա կիրառությունը դերժ չի մնացել հունարենի բացարձակ սեռական կառույցի բույական մասի ազդեցությունից: Հայերենի անորոշ դերբայի գործիականը, ղրկված լինելով իր նախնական իմաստից, և միշտ առավելապես գործածվելով «շատ ազատ կերպով որպես մի տեսակ բացարձակ բայածև»¹⁹, կարող էր ընտրվել որպես հունարենի բացարձակ սեռական կառույցի դերբային լիովին համապատասխանող մի ձև:

Ինչ վերաբերում է դարձվածի անուն-ենթակայի սեռական հոլովածին, ապա այն այլ բան չէ, քան անվանական անորոշ դերբայի հատկացուցիչ սեռականը, բայց հետաքրքրական է նկատել, որ ձևաբանական տեսակետից այն նաև համապատասխանում է հունարեն դարձվածի սեռականով ենթակային: Բացի այդ, հայտնի է, որ սեռական ենթական, որի ծագման մասին շատ վեճեր են եղել, բնորոշ է առավելապես —եալ վերջավորությամբ դերբայով դարձվածների համար, որոնք բուն հայկական են: Չձգտելով որևէ կապ հաստատել գործիականով անորոշ դերբայի և —եալ-ով դերբայի սեռական ենթակաների միջև, որոնք հավանաբար տարբեր ծագում ունեն, այնուամենայնիվ պետք չէ թերագնահատել այն դերբայի, որ կարող է խաղացած լինել համաբանությունը քննարկվող դարձվածի ընտրության մեջ որպես համարժեք այնպիսի մի շարույթի, ինչպիսին հունարենի բացարձակ սեռականն է, որն իր հերթին սեռականով ենթակա է պարունակում:

¹⁸ S b' u V o g t. Formes nominales, որի բաղմաթիվ օրինակները կրկնում է Ռ. Շտեմպելը վերջերս լույս տեսած իր Die infiniten Verbalformen des Armenischen, Frankfurt a. M. (Bern) N. Y. 1983 աշխատության մեջ, բայց առանց հատուկ ուշադրություն դարձնելու մեր քննած շարույթի վրա:

¹⁹ V o g t. Formes nominales, p. 20.

Վերջապես պետք է նշել, որ անորոշ դերրայը պահպանում է իր բաական արժեքը նույնիսկ դործիական հոլովաձևով, ինչպես ապացուցում են մի շարք օրինակներ, որոնցում անորոշ դերրայը հայցականով ուղիղ խնդիր է պահանջում. հմմտ. Ո 14՝ աեառն ուաուցանելով զմեզ և Ո 34՝ ետրին առաֆելով գովելով զմամն: Միեևույն բական ձևը այստեղ երկակի գործառույթ է ձևոք բերում. որպես անուն սահանում է սեռական հակացուցիչ և որպես բայ ուղիղ խնդիր է առնում²⁰:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ հայերենի առաջին դրավոր վկայություններում բավական խորթ և մերժված, սակայն հետագայում շատ առաժված մի ձև, ինչպես այդ երևում է մեր քննած և այլ բնագրերից, կարողացել է կաղմավորվել և տարածվել մի շարք անցումների շնորհիվ, որոնք մենք կփորձենք ի մի բերել:

- 1) անուն-անորոշ դերրայի կիրառությունը գործիական հոլովով.
- 2) անուն-անորոշ դերրայի սեռականով հատկացուցիչ ընդունելը.
- 3) անորոշ դերրայի գործիական հոլովաձևի կողմից զուտ գործիականի արժեքի կորուստը և ճիշտ դերրայի նման պատճառային կամ ժամանակային տիպի արժեքի ձևոքրերումը.
- 4) հունարենի բացարձակ սեռական շարույթի բական մասի և հայերենի անորոշ դերրայի գործիականի լիջև համարժեքության առաջացումը.
- 5) հունարենում և հայերենում ենթակայի սեռական հոլովի ձևական համընկումը և, թերևս, եալ-ով դերրայական դարձվածի սեռական ենթակայի զուգահեռ ձևի հետ բաղադրությունը.
- 6) հունարենի բացարձակ սեռականի դիմաց հայերեն երկու տիպի շարույթների նույնացումը՝ ենթակայի սեռական հոլովաձևը եալ-ով դերրայի հետ և ենթակայի սեռական հոլովաձևը անորոշ դերրայի գործիականի հետ, որոնք ընկալվում են որպես միևնույն արժեքն ունեցող ձևեր:

Սրանով հույս ունենք նպաստելու մի խնդրի քննությանը, որը գեոև հետազոտողների սեռուն ուշադրությանը չի արժանացել:

TEARN ASELOV: ПЕРЕВОД ГРЕЧЕСКОГО РОДИТЕЛЬНОГО АБСОЛЮТИВНОГО
В АРМЯНСКОЙ ВЕРСИИ ВАСИЛИЯ КЕСАРИЙСКОГО

ГАБРИЭЛЛА УЛУОДЖЯН (Италия)

Резюме

Известно, что система причастий армянского языка по сравнению с греческой менее богата. Первые переводчики Нового завета блестяще справились с возникшими в связи с этим трудностями. В частности, характерный для греческого языка оборот *genitivus absolutus* в армянском передавался, за некоторыми исключениями, в соответствии с выразительными возможностями армянского языка. Впоследствии на месте абсолютного генитива в переводах встречаются формы, которые, когда они не сводятся к синтаксическим калькам, представляют собой ряд вариантов, заслуживающих внимания. Рассмотрение значительного числа случаев в армянской версии Василия Кесарийского, с одной стороны, доказывает влияние греческого языка, с другой — свидетельствует об устойчивости исконно армянских тенденций, что вызывает интересные случаи языковой интерференции на синтаксическом уровне.

Յրան. թարգմ. Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆԸ

²⁰ Հետաքրքրական կիներ խորացնել այս դիտարկումը, անդրադառնալով հունարենին և լատիներենին, որտեղ նույնպես անորոշ դերրայը բական և անվանական կիրառություններ ունի, սակայն, թվում է, նրանցում չկան մեր դարձվածի հետ համեմատելի կառույցներ: Որպես նախնական իրադեկում տե՛ս Y. Humbert. Syntaxe grecque. Paris, 1960³, p. 52—54; A. Ernout — E. Thomas. Syntaxe latine. Paris, 1964, p. 255—261.